ՆՈՐ-ԴԱՐ

№ 215 ՏԱՍՆԵՒԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ Շաբաթ 7 Դեկտեմբերի **1896** Շաբաթ 7 Դեկտեմբերի ՏԱՍՆԵՒԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ № 215

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ. ամիսը՝ 1 ր., հատով 5 կ.
Բաժանորդ գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը:

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція „Норъ-Даръ" կամ Tiflis Rédaction „Nor-Dar".

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը: Յայտարարութիւններն ընդունւում են ամեն լեզուներով: Յայտարարութիւնների բառին 3 կ., ընկերների համար կրկնապատիկ

ՄԱՐՏԻՐՈՍ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ և բժիշկ ԳՐԻԳՈՐ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ ՄԱԿԱՐԵԱՆՆԵՐԸ, ԵՂԻՍԱԲԵԹ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ և ՅԱՐՈՒԹԻՒՆ ԴԱՒԹԵԱՆ ՕՖՈՅԵԱՆՆԵՐԸ, ՅԱՐՈՒԹԻՒՆ և ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍԱՐԳՍԵԱՆ ՏԷՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՆԵՐԸ խորին վշտով յայտնում են ազգականներին և բարեկամներին առաջինը իր թանկագին ամուսնու, երկրորդը և երրորդը՝ իրենց անմոռանալի մօր, չորրորդը իր զաքանչի և փեսաները իրենց քրոջ

ԿԱՏԱՐԻՆԷ ՍԱՐԳՍԵԱՆ ՄԱԿԱՐԵԱՆՑԻ

մահը: Ամփոփը կկատարուի շաբաթ, դեկտեմբ. 7-ին, երեկոյեան ժամը 7-ին: Յուղարկաւորութեան հանդէսը տեղի կունենայ դեկտեմբերի 8 ին, կիրակի առաւօտեան ժամը 11-ին իր տնից Միքայէլեան փողոց, տուն Ուսիրէլեանի №92 դէպի Ջուկիսյ Թանգոյեան եկեղեցին:
(692) 1—1

ԵԳՈՐ ԱԻԱԳԵԱՆ ԴԱՒԹԵԱՆԸ քոյրերի և եղբայրների հետ միասին խորին վշտով յայտնում են ազգականներին և բարեկամներին իրենց թանկագին եղբօր

Գ Ր Ի Գ Ո Ր Ի

մահը: Յուղարկաւորութեան հանդէսը տեղի կունենայ դեկտեմբերի 8-ին, կիրակի, ժամը 10-ին իր սեպհական տնից, Մադաթովյա փողոցում, դէպի Սուրբ Ս. Գէորգ եկեղեցին:
(691) 1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող.— Ովքեր կարող են քահանայանալ:
Թիւրքական գործեր:
Կ. Պոլսի հայ թերթերից:
Փ ո ք ր ի կ ն.— Մաղթանք Վանքում Էջմիածնի պրոֆեսորի ձիւղ: Դատապարտելի անհոգութիւն: Նորէլ: Նոր հրատարակութիւն: Նաւթի ֆիրման: Թուրքիոյ: Մագրասայից Մամուլի չորքը:
Թ ղ թ ա կ ց ու թ ի ւ ն ն ե ր— Նամակ Բուլղարիայից: Սալթ խա:
Բ ա ն ա ս ի ր ա կ ա ն. Մարդասպանը.
Տ ե ղ ե կ ա տ ու.
Յ ա յ տ ա ր ա ր ու թ ի ւ ն ն ե ր.

ՈՎՔԵՐ ԿԱՐՈՂ ԵՆ ՔԱՀԱՆԱՅԱՆԱԼ

Քահանայացուի վերաբերեալ ժողովրդի ունեցած ընտրողական ընկլրանքն անխախտ պահելու և այդ սկզբունքը օգտակար և գործնական սահմանների մէջ դնելու համար «Նոր-Դար»-ի անցեալ համարներից մէկում առաջարկեցինք քահանայանալ ցանկացողներից կանխաւ մի ցուցակ կազմել և առաջարկել ընտրութեան քահանայի կարիք ունեցող ժողովրդին: Բայց որպէս զի այդ ցուցակը ազատ լինի զանազան կամայականութիւններից, և իշխանաւորների անձնական բարեհաճութիւնից ու բարեկամութիւնից, ասացինք որ պէտք է ի նկատի ունենանք ցուցակ մուծուելիք անձնաւորութիւնների վերաբերեալ որոշ փորձ և միջոցի: Ցուցակ կազմելը չատ հեշտ է, որովհետև չատերը կըցանկանան ցանկացողներ, բայց մեզ զբաղեցնող խնդիրն այն է, թէ ո՛վ ե ր կ ա ր ո ղ են մտնել այդ ցուցակը:

Որպէս զի կարգադրենք այդ չափը գտնել՝ պէտք է նախ ընդունենք, որ քահանայութիւն էլ ուրիշ չատ պաշտօնների պէս մի պաշտօն է, կոչում է, միայն այն տարբերութեամբ միւս պաշտօններից որ այս ապարինքում զուտ ծառայական, պաշտօնական մասը երկրորդական տեղ է բռնում և գլխաւորը բարոյական պարտականութիւնն է: Ընդունելով ընդմիշտ, որ դա մի կոչում է, պարզ է, որ այդ կոչմանը դիմող անձնաւորութիւնից էլ պէտք է համապատասխան պատրաստութիւն և մի որոշ վարկ պահանջել:

Ամեն մի պաշտօն իւրը որոշում է պաշտօնեայի պատրաստութեան և պարտականութեան էութիւնն ու չափը: Ուսուցիչը պէտք է հմուտ լինի մանկավարժութեան մէջ, երաժիշտը պէտք է ձայն ունենայ, կօշկակարը լաւ կօշիկ կարել պիտի կարողանայ և այլն: Իսկ քահանան: Պատասխանելու համար այս հարցին, պէտք է առաջ որոշենք, թէ ինչ բան է քահանայական կոչումը, որպէս զի ապա իմանանք թէ ով է արժանի այդ կոչմանը:

Մենք կարծում ենք, որ այդ կոչման բովանդակութիւնը սահմանւում է հենց այն պատուանուններով, որոնք ծուխը տալիս է իր ծխատէր քահանային: Քահանային անուանում են հայր, խոստովանահայր, տէր, հովիւ, առաջնորդ, միջնորդ և այլն:

Իսկ բացատրել այդ պատուանունների նշանակութիւնն և նրանցից կախուած պարտականութիւնները, կընչանակի մի անգամ էլ կրկնել հազար անգամ ասածը:

Ուրեմն այն անձը, որ կամենում է քահանայական կոչումն ընդունել, պէտք է արժանի լինի հայր լինելու, պէտք է բարձրութիւն ունենայ տէր կոչուելու, պէտք է կարողութիւն ունենայ առաջնորդելու, հովուելու, հովւելու և այլն: Ինչ կասկած, որ այս բոլոր բարեմասնութիւններն ունենալուց յետոյ քահանայանալ ցանկացողը պէտք է իմանայ նաև ինչպէս կարգը, պատկառութեան միջնորդութեան և այլ այսպիսի արարողութիւնների կատարելը:

Այս էլ անհրաժեշտ է, բայց մեր կարծիքով համեմատաբար երկրորդական պահանջ է, որը սակայն այժմ դժբախտաբար կատարւում բացառութիւններ անձնաւորութիւնների միակ թէ-պահանջը և թէ արդարացման պատճառն է ընդունւում: Հեռուպուտը թէկուզ յետոյն ակտը լինի, բաւական է որ այսպէս կոչուած տ ի ր ա ց ու թ ե ա ն պաշարն ունի, այդքն արժանի է համարւում քահանայ լինելու, երեք որովհետև միայն այդ են ընդունում քահանայի պարտականութիւնը:

Բայց դժուար խնդիրը հենց այն է, թէ որտեղից գտնենք լաւ ամենայնի պատրաստուած այնպիսի անձնաւորութիւններ, որոնք համապատասխանեն մեր յիշուած պահանջներին: Ի հարկէ, ոչ երկինքը կուղարկի դրանց և ոչ էլ երկիրը կըծնի, այդպիսիներին մենք ինքներս պէտք է պատրաստենք յատուկ ծըրագրով, որոշ և նպատակայարմար նախագծով:

Լուսաւորուած երկրներում ինչպէս որ ամեն տեսակ մասնագիտութիւնների համար առանձին կրթական հաստատութիւններ ու բաժանմունքներ կան, այդպէս և յատուկ քահանայութեան համար էլ որոշ հաստատուած դպրոցներ ու կըթարաններ կան, որոնցից դուրս եկողները միայն իրաւունք ունեն հոգևոր կոչումն ընդունելու: «Նոր-Դար»-ն այդ հաստատութիւնների ձևի ու տեսակի մասին քանիցս ընդարձակ տեղեկութիւններ է տուել.

Մենք, որ ուժի կարիք ունենք որոշ հոգով ու կրթութեամբ քահանաներ պատրաստելու և ունենալու, այդպիսի հաստատութիւններ չունենք և չենք էլ մտածում ունենալու մասին, որովհետև մեր կըթական այն հաստատութիւնները, որոնք կարող էին ծառայել այդ նպատակին, լաւ կարգ ու կանոնի ենթարկելով ծրագիրը և նպատակայարմար փոփոխութիւններ մըցնելով, այդ հաստատութիւնները ընդհակառակը հեռացնում, կորցնում են իրենց նպատակին տանող ճանապարհը և արտադրում են այնպիսի անգոյն արարածներ, որոնք ոչ միայն անպատրաստ են քահանայական կոչման համար, այլ անպէտք են նաև կեանքի ուրիշ ասպարէզներում:

Մի երկու տարի առաջ, երբ Թիֆլիսում միտք յղացան ընծայարան հիմնելու և այդ միտքն արձագանք գտաւ նաև ուրիշ կենդրոններում, երբ լսւեց որ մտադիր են այդպիսի հաստատութիւններ հիմնելու և մեր նշանաւոր վանքերում, «Նոր-Դար»-ը ուրախութեամբ ողջունեց այդ ձեռնարկութեան ը ս կ ը ս ն ը, որովհետև այդ տե-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԱՐԴԱՍՊԱՆԸ *)

«Ջրի կաթը վերջը ջրի ճամփին կըկոտրի»։
Ժողովրդական առած

XVI

Երբ չութւորները եալ արին, ձորի թալում վերջին անգամ Գեոն նրանց աչքովն ընկաւ։ Նա հանգիստ, ոտներն իշի կողքը թակելով, գնում էր։ Գեօյի յետևից նոյն թալում փափախը կռնատակին երևաց Ղուկասը և իսկոյն և եթ ձորը մտաւ։ Երևում էր, նա էլ չութւորներին էր դիտում։ Այդտեղից արդէն չութւորներն անյայտացան։ Նրանք գիւղը մտան, բայց ոչ մարդի բան ասացին, և ոչ կամեցան քշանեան ձորը,—չէին ուզում վկայ դառնալ, քաշուելով դաւի-դատարանից. Նրանք, իհարկէ, կարող էին արգելք լինել, կարող էին ազատել Գեօյին,—բայց դրա համար համարձակութիւն ու խիղճ չունէին, մարդասիրական զգացմունքը մեռած էր նրանց մէջ։

Ձորի խաղալի գիւղից, այնտեղ, ուր բաւականին նեղանում է ձորը, այնպէս որ գնալիս պիտի մի քանի անգամ անցու՝ դարձ անես առուակը, այգում երկու մարդ էր բան անում։ Նրանցից մէկը մտոն էր կտրում, միւսը ծոլամ հաւաքում։

—«Եաւաշ, Սիմոն դայի,—անգած գի հղա մի, լսըմ ես։ Էս ինչ հարէյ ա,—տհաճեկուած բացականչեց Ծոլամ հաւաքողը, հրաւիրելով մտոր կտրողի ուշադրութիւնը։ Սիմոն ամեն, ի զարմանս Ծոլամ հաւաքողի, չարունակեց լռեկյայն իր գործը, ուչք չդարձնելով իրեն ուղղած խօսքերին։

—Վա՛յ, վա՛յ։ Վա՛յ, քո մատաղ, վա՛յ քո մատաղ։ Ա՛յ, հաւատար, ա՛յ, հաւատար,—ձորից լսւում էին այս աղերսական բացականչութիւնները, և այնպիսի մի գիր ձայնով, որ ապառաժն անգամ լերդա կըգնար։

—Եաւաշ մի։ Բանի ես, բա. լսւ՞մ չես էտ ծիսը, - կրկին դարձաւ Սիմոնին Ծոլամ հաւաքողը, և այս անգամ չկամեցաւ գիշի նրան։

—Ես քու մշակն եմ, կարալ չեմ բանը թողնեմ, գնամ, գնամ տես ինչ հարէյ ա, մարդ են սպանըմ, Աստուծ վկայ,—գեղնագունած ասաց Ծոլամ հաւաքողը և մօտեցաւ Սիմոնին։

—Այ, բանից կայ, Բօլսճինանց Ակոն. խալխի դաւին քի չին տանել.մ ա գիզըմ զօրըզչինեն ըն իրար հետ կալըմ են,—ասաց Սիմոնն ու չարունակեց մտաներին տալ յաքատում։

Ձայնը քանի գնում նոյնքան սաստկանում ու սոսկալի էր դառնում. լսւում էին միևնոյն խօսքերը, միևնոյն աղաչանքները։ Մօտ մի ժամ գալիս էր ձայնը. Նա այնքան գիլ էր, այնքան անբեկ, այնքան աղիողորմ, որ բաշերից չնէրն սկսեցին հաչել։ Ձան հաչոցի վրայ երկու մարդ դուրս եկան, նրանք քաշեցին ձորի վրայ և էլի յետ դարձան...

—Ախպէր, թէ դու գնըմ չես, ես եմ գնըմ,-ասաց Ծոլամ հաւաքողը Սիմոնին։

Այս անգամ Սիմոնը քաշեցաւ ձորը։ Նրա անյայտանալուց յետ ձայնը դեռ էլի գալիս էր, բայց այս անգամ աւ մէջ և ոչ այնքան ուժեղ... Հեռաքըքրուած Ակոնը ես ուզեց քաշանալ ձորը, բայց դեռ այդտեղ դուրս չեկած, ձայնը կտրուեց... Ակոնը չափարի մօտ կանգնած ապշած նայում էր ձորի կողմը. Նա ուզում էր մի բան իմանալ, բայց իզուր, որովհետև ոչ ձայն էր լըսւում, ոչ մարդ երևում։ Կէս ժամից աւել նա մնաց չափարի մօտ արձանացած. վերջապէս երևաց Սիմոնը, որ արագ ձորից բարձրանում էր. բէչ ժամանակից յետ երևաց նրա յետևից մի մարդ պաշոյնը կապած, չամբախի կիտից բռնած: Ո՛վ էր այդ մարդը,—առաջին անգամ չճանաչեց Ակոնը. մի այն երևում էր, որ մարդը դէպի այգին է գալիս։

Երբ բաւական մօտեցաւ, Ակոնը նըկատեց, որ Սիմոնը յետ դարձաւ, նայեց ետևից եկողի վրայ և ինչ որ բան ասաց նրան։ Այդ ժամանակ անծանօթը թեքուեց ներքև։ Ակոնը պարզ ճանաչեց, որ անծանօթը Ղուկասն է, բայց կամենալով իմանալ մյն հանելուկը, թէ ինչու Սիմոնը խօսում էր Ղուկասի հետ, հարցրեց.

—Էն ո՞վ ա էն գնացողը, Սիմոն դայի։

—Ո՞րն, ա՛ պա,—հարցրեց Սիմոնը, չիմանալը գնելով։

—Տեսըմ չես. հրէ հա՛.. գնըմ ա,—ասաց Ակոնը ձեռը Ղուկասի վրայ մեկնելով։

—Գիդամ ոչ. ոչ մի չեմ տեսըմ,—չիմացաւ ինչպէս ուղղի Սիմոնը իր վտանգաւոր սխալը։

—Ի՞հ, Ղուգասին ճանաչըմ չես. էլ վախտ հէ հերը խօսըմ իր, հմի ճանաչըմ չես,—պատասխանեց Ակոնը, գիտամբ ցոյց տալով, որ ինքը բանի գլուխ է։

—Էն անիծածն ա, տաղ արա. ոչ մի բան չասես, արի գնանք տուն,—կամաց ասաց Սիմոնն ու առաջ ընկաւ։ Ակոնը լռեց. մնաց մտքարարի. Նա գիտէր, որ մի սոսկալի բան պիտի կատարուած լինի ձորում Ղուկասի ձեռով. բայց թէ ինչ է կատարուել, առայժմ հնար չունէր իմանալու, որովհետև Սիմոնը փորազուրկ էր։ Լաւ գնացին տուն հաց ուտելու. բայց որքան եղաւ Ակոնի զարմանքը որ Ղուկասին այդ տեղ տեսաւ։ Նա սոսկաց, երբ նայեց Ղուկասի դէմքին. այդպիսի դէմք, այդպիսի աչքեր պատանիների հեքիաթներում անգամ չէր տեսել Ակոնը։ Եւ ոչ միայն Ակոնը, այլ բոլոր տանեցիք, որոնք խամ չէին Ղուկասից, այս անգամ սոսկում էին նայել նրա երեսին։ Ինչու է Ղուկասի երեսն այսպէս գունատուել, դժոխային դարձել. ինչու են աչքերը արիւնով լցուել. երեսի երակներն ինչու են խաղում, քթածակերն ինչու են լայնացել,—անհասկանալի էր ներկայ եղողների համար, որովհետև դեռ բանի խաբար չէին։ Այնքանը միայն, որ բոլորը լռելեայն քաշուեցին Ղուկասի մօտից։ Ակոնը չկարողացաւ հաց ուտել, տեղից վերկացաւ ու հեռացաւ։ Գիւղամիջին մօտենալիս Ակոնի

*) Տես «Նոր-Դար» № 214:

սակ հաստատութիւնները կրթական յարմարաւոր, մեր և մեր ժամանակի պահանջներին համապատասխանող ծրագրով կարող էին մեր ցանկացած նպատակին ծառայել և քահանայական խնդիրը զգալի չափով բարւոք վիճակի մէջ դնել, մանաւանդ գիւղական համայնքների վերաբերեալ: Բայց դժբաղդաբար ընծայարանների օգտակար սկզբունքը գործնական այսօրինակ ընթացքի մէջ դրին, որ եղած չարիքի վրայ նորը աւելացրին արտօնեալ ոգէանոր արտադրելով այդ անտեղից. այն մարդիկ, որոնք առաջ հաշւում էին իրենց ազատութեան հետ և քաշւում, ընծայարան կոչուած տեղում մի քանի ամիս անցկացնելուց յետոյ իրենց «աւարտած» համարելով ազատութեանն աւելացնում էին և մեծամտութիւն:

Այժմ միակ նպատակայարմար հաստատութիւնները մնում են էլի մեր թեմական դպրոցները ու ճեմարանը, որոնք պէտք է տան մեզ մեր ցանկացած քահանաները և նըրանք, որոնք կրցանկանան քահանայացուների ցուցակը մտնել, որպէս կրթական փարկ պէտք է անպատճառ ունենան այդ դպրոցների աւարտման վկայականը:

Բայց որպէսզի այդ վկայականը փաստութիւն ներշնչող և արժանաւորութիւն վկայող վաւերաթուղթ համարուի, պէտք է նախ բարեփոխութեան ենթարկել այդ դպրոցները, ուղղել նրանց գիծը դէպի հարկաւոր նպատակը: Ոչինչ նոր բան հարկաւոր չէ աւելացնել. մեր դպրոցների ծրագիրը այնքան ընդարձակ և բազմակողմանի է, որ նա շատ բաւարար է մեր ցանկացած նպատակի համար: Այդ ծրագրի մէջ կայ կրօն, մայրենի և ուրիշ լեզուներ, բնական գիտութիւն, պատմութիւն, գրականութիւն, աշխարհագրութիւն և այլն, որոնք ամենքն էլ գիտութիւն են և զարգացնող առարկաներ և ով կարող է ասել թէ, հարկաւոր չեն մեր քահանաներին: յայց էական խնդիրն այն է, որ այդ առարկաների ծրագրի մէջ պէտք է փոփոխութիւն մտցնել և պէտք է իրագործել այդ ծրագիրը գործնապէս, իրապէս և ոչ թէ լոկ անուանական ու ձևական կերպով: Բաւական չէ այդ ծրագրի անցնելը. այդ բոլորի մէջ պէտք է մտցնել և մի որոշ գոյն, մի հոգի, որը համապատասխանում և պահանջում է մեր դպրոցների նպատակը: Մենք այս պահանջը անում ենք այն խորը համոզմունքից դրդւած, որ ինչ դրոշմւում է մատաղ սրտի վրայ և ինչ հոգի ներշնչւում է մանուկ հասակից, երբէք չի ջնջւում արբուն տարիներում:

Գուցէ կասեն թէ, միթէ չի կարող աւելի բարձր կրթութիւն ունեցողը, համալսարանականը, քահանայացուների ցուցակը մտնել. այո կարող է, բայց պէտք է նա էլ արժանի լինի ճեմարանի կամ թեմակ. դպրոցի վկայականին, որովհետև ընդունում ենք, որ այդ վկայականը քահանայութեան հարկաւոր պատրաստութեան և որոշ հոգու փաստաթուղթը պէտք է լինի: Եթէ Փիլիկոսը չի կարող հրապարակախօս լինել, չի էլ կարող և հարկէ քահանայ դառնալ:

Օրինաւոր քահանաների կարիք ունին թէ մեր գիւղերը և թէ քաղաքները, բայց այդ երկուսի պահանջները էլ տարբեր լինելով պէտք է որոշ չափով տարբերուին և նրանց քահանաները: Շատ բան կայ որ հարկաւոր է գիւղական քահանային գիւղում գործելու համար, շատ բան էլ կայ, որ քաղաքում գործող քահանային է հարկաւոր. որոնք նշանաւոր կէտեր են, որոնք առանձին յօդուածների և լուսաբանութեան խնդիր կարող են լինել: Բայց յամենայն դէպս ցուցակ մըտնող անձնաւորութիւնները նայելով իրենց կրթական ցենզին, արժանաւորութեան պէտք է կարգերի բաժանել—գիւղերի համար առանձին, գիւղաքաղաքներինը առանձին և քաղաքներինը առանձին, այնինչ այն կարգը, որովհետև մտցրին 1896 թւից ուսուցչական դասակարգի մէջ:

Վերոյիշեալ ծրագիրը իրագործելուն շատ մեծ խոչընդոտ կարող է հանդիսանալ քահանայի նիւթական ապահովութիւնը. մի խնդիր, որը նոյնպէս ուսումնասիրութեան և կարգաւորութեան կարօտ է: Այդ մասին մեր հայեացքը կըպարզենք «Նոր-Դար»-ի մօտիկ համարներից մէկում:

Պ. Հ.

ԹՐՔԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Օրմանեան սրբազանի հրաժարականութիւնը. Կ. Պոլսից հեռագրում են «Թաւս. գործ.»-ը, որ մինիստրների խորհուրդը իւր վերջին նիստում, քննում էր հայերին ընդհանուր ներումն (ամնիստիա) շնորհելու ծրագիրը: Հայոց պատրիարքը Դրանը մատուցել է վաւերագիր, որ ներումն շնորհելուց յետոյ, ազդմութիւն ստացողները իրենց խաղաղ կըպահեն: Պատրիարքը նրանց ապագայում խաղաղութեան համար բարոյական և երաշխաւորութիւնը յանձն է առել: Պատրիարքը հաւաստել է, որ ազդմութիւն ստացողները եկեղեցիներում կերդուեն սուլթանին հպատակ լինելու համար:

Փինանսական խնդրի մասին «P.Cor.» լրագրին գրում են Պարիզից. «Թրքական փինանսների ռեֆորմների մասին պետութիւնների մէջ ծագած տարաձայնութիւններն բաւ երկար, այնքան էլ լուրջ բնաւորութիւն չունին, ինչպէս կարծում էին սկզբում: Ինչ վերաբերում է Թիւրքիայի նկատմամբ Ֆրանսիայի և Ռուսիայի մէջ կայացած համաձայնութեան, Պալիկի քաղաքական շրջաններում այն կարծիքն է տիրում, որ այդ համաձայնութիւնը ոչնչով խանգարուած չէ: Պարիզում բոլորովին բնական են համարում, որ թրքական փինանսները կանոնաւորելու համար փորձեր անելիս տարաձայնութիւններ են ծագում մանրամասնութիւնների մասին, թէև այդ նպատակին ձգտող ռեֆորմների ծրագրները չեն կարող խիստ տարբեր լինել իրարից, որովհետև այդ բոլոր ծրագրներն էլ անհրաժեշտօրէն ուղղուած պիտի լինեն Թիւրքիայի հարկերի այժման սիստեմի փոփոխութեան և նրա փինանսական վարչութեան վրայ հըսկողութիւն նշանակելուն: Ի նկատի ունենալով այս գործի դժուարութիւնը, պետութիւնները վճռել են բաւականանալ ամենաանհրաժեշտ միջոցները ձեռք առնելով: Դրանցից առաջինը կարելի է համարել թըրքական նոր փոխառութիւնը: Ինչքան էլ որ այդ փոխառութեան գումարը սահմանափակ լինի (ինչպէս ասում են, 30—50 միլիոն ֆրանկ է լինելու), ոչ մի պետութիւն չի կարող երաշխաւոր լինել, մինչև որ հաստատուած չլինի, որ թրքական փինանսական վարչութեան վրայ եղած հսկողութիւնը հիմնական ռեֆորմների է ենթարկուած: Որովհետև եւրոպական պետութիւնները համաձայնել են բոլոր ռեֆորմները մտցնել սուլթանի աջակցութեամբ, այժմ խընդիրը վերաբերում է այն բանին, որ ձեռք առնելիք միջոցների մասին համաձայնութիւն կայացուի, առանց սուլթանի հեղինակութեան վնաս հասցնելու: Սրանով է բացատրւում, որ դիպլոմատիան դանդաղ է գործում թրքական փինանսների կանոնաւորելու խնդրի վերաբերմամբ: Այդ դժուարութիւնները, որոնց դէմ հարկ կլինի կռուել այս դէպքում, աւելի շատ են և նշանաւոր քան այն դժուարութիւնները, որոնք ներկայացան Կրետէի գործերը կանոնաւորելիս: Կրետէում, ամենայն հաւանականութեամբ, կըմտցուեն բոլոր ռեֆորմները, որոնց նկատմամբ համաձայնել է Դուռը, թէև դեռևս շատ արգելքներ կարող են առաջանալ: Սուլթանը Կրետէի վերաբերմամբ, բաւ երկայթին, վճռել է զիջել պետութիւններին, որպէս զի դրա փոխարէն համապատասխան օգուտներ ստանայ իւր պետութեան համար: Ցամենայն դէպս Ֆրանսիան հենց նրա համար, որ նա եսասիրական շահերի չի հետամուտ լինում Թիւրքիայում, յամառութեամբ կըպնդէ որ նրա անկախութեան համար անհրաժեշտ ռեֆորմներն իրագործուին, մանաւանդ, որ թրքական պետական պարտքի շատ միլիարդներ պատկանում են Ֆրանսիայի հպատակների ձեռքին»:

Դրութիւնը նոյնն է. Կ. Պոլսից հեռագրում են «Berlin. Tageb.»-ին, որ Թիւրքիայում իրերի դրութիւնը մնում է նոյնը: Մինիստրութեան փոփոխութեան մասին հաղորդուած լուրերը ճիշտ չեն: Ձերբակալում են նրանց, որոնք կասկածելի են համարւում, որպէս գործակից երիտասարդ Թիւրքիայի կուսակցութեան: Նազիմ-էֆէնդուն հըրաժարեցնելով ոստիկանութեան մինիստրութիւնից, ուզում են հեռացնել մայրաքաղաքից. այդ նպատակով նրան պաշտօն են տալիս գաւառում:

Բացատրութիւնները աւելորդ են. Կ. Պոլսից մի հեռագիր հաղորդում է, որ «Ջանիկ» շոգենաւը, որ քաղաքական յանցաւորներին Ալէքսանդրէտտա էր տանում, ճանապարհին խորտակուեց: Ի նկատի ունենալով, որ այդ շոգենաւի վրայ 200 սոֆթաներ կային, և այն որ այդպիսի «խորտակումներ» յաճախ են կրկնւում Թիւրքիայի ներքին քաղաքականութեան մէջ, կարծում ենք, որ այս խորհրդաւոր դէպքը բացատրութիւնների կարիք չունի:

Շնորհակալութիւն: Սուլթանը մեծ վեզիրի միջոցով շնորհակալութիւն է յայտնել ներքին գործերի մինիստրի օգնական Արթին փաշային՝ պատրիարքի ընտրութեան ժամանակ նրա ցոյց տուած գործունէութեան համար:

Կ. ՊՈԼՍԻ ՀԱՅ ԹԵՐԹԵՐԻՑ

ՀԱՅԵՐՆ Ի ԿԻՊՐՈՍ.—Կիպրոսի մէջ հրատարակուած Թուրքերէն Փէշէէշ լրագիրը մէջ կբերէ այն անպատեհութիւններն, որք յառաջ պիտի գան երկրին կացութեան տեսակէտով հայերուն մեծ թւով Կիպրոս գաղթելէն և կըծանուցանէ թէ Օսմ. Պանքային տեղւոյն մասնաճիւղին տնօրէնին նախագահութեամբ յանձնաժողով մը կազմուած է՝ հայոց գաղթականութեանը համար: Նոյն յանձնաժողովն որոշեր է որ հաղթականաց թիւն հարիւրը չանցնի և իւրաքանչիւրը առ նուազն երեսուն երկու ոսկւոյ չափ գումարի մը տէր ըլլայ:

ՏԻԱՐՊԷՔԻՐԻ հրդեհի վայրին մէջ մինչև հիմա 247 խանութներ շինուած և հարիւրէ աւելի խանութներու ալ հիմերը ուռուած են:

ԷՐԶՐՈՒՄէն նամակ. 2 Թուով կըգրեն թէ հոն ձմեռը խստիւ սկսած է. առաւօտները 2—3 սանթիմ ձիւն կըտեղայ և գիշերն վար 12 աստիճան ցուրտ կընէ եղեր:

ՁԵՐԲԱԿԱԼՄԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐ

Խռովարարաց խմբին իբրև անդամ և օժա. զինուորաց վրայ հրացէն պարպած ըլլալու ամբաստանութեամբ ձերբակալեալ Մէլիք Բէյլիի ընկերը, պատըճը Օհան, որ Սամաթիաքապւի Արփաճը Պաքալ 14 թիւ տանը կբնակի և որոյ գինտղիծները ծանօթ չեն, դեռ ձերբակալուած չըլլալով, Եղեռնադատ ատեանին նախագահը պատժական դատավարութեան օրինաց 371 րդ յօդուածին համաձայն, տասն օր ալ պայմանաժամ կուտայ անոր որպէս զի դատարան ներկայանայ, հակառակ պարագայի մէջ, օրինաց դէմ անսաստած համարուելով, ի բացակայութեան պիտի դատուի, քաղաքային իրաւունքներէն պիտի զըրկուի և իր ստացուածը կառավարութեան կողմէ պիտի գրաւուի, որով իրաւունք պիտի

աչքովն ընկան միքանի խումբ մարդիկ, որոնք հետաքրքրուած իրար հետ խորհրդաւոր խօսակցութեան մէջ էին: Մօտենալով խմբերից մէկին, հարցրեց Ակոնը:

—Ի՞նչ կայ, ինչ ա պատահել:

—Ասում են, Գեոյի էշը տուն ա եկել մի հաւ ետևիցը քաշ տալով. ինքը կայ ոչ,—ասաց մինը խմբից:

—Է՞տ ա, հմի մացա՞յ,—բացականչեց Ակոնը, որ շատ խորհրդաւոր երևաց հրջապատողներին:

—Ի՞նչ ա, ինչ ա պատահել,—հետաքրքրուած հարցրին Ակոնին, և նա համառօտ պատմեց իւր լսածն ու տեսածը: Ընդհանուր լռութիւն տիրեց խմբերին: Ամենքը մի տեսակ սոսկում ըզգացին: Այդքանը հաղորդելուց յետ Ակոնը քաշուեց իրենց տունը: Շատով ամբողջ գիւղում տարածուեց, որ Գեոն սպանուել է և սպանողը Ղուկասն է: Դեռ Ղուկասը Սիմոնի մօտից չէր հեռացել, որ այդ տեղ էլ համբաւ հասաւ:

—Այ անիծած, ինչ իր ուզում էն Ասծու խեղճ նաչարից. բա հէ էս էրագիցն էլ ա վնծար ո՞չ: Քաշուի սախան քաշուի, աչքս քի տենայ ոչ,—դառը հայեացք գցելով Ղուկասի վրայ, նախատեց նրան Սիմոնի եղբայր ծերունին, որ թէ Ղուկասի ազգականն էր և թէ շատ անգամ դժուար բողէներում նրա պաշտպանը: Ղուկասն ապուշի նման նայում էր միայն ծերունու վրայ:

—Քեզ չեմ ասում քաշուի: Հմի էլ ուզըմ ես արինն իմ օջաղը կապես,—բղաւեց ծերունին և դուրս արաւ սենեակից: Արդէն ճրագվառոցն էր, Ղուկասը քաշուեց իրենց տունը: Ղուկասը շուտով տուն գնալու ու դուրս եկաւ գիւղամէջ առանց դաշոյնի, առանց շամբախի. նա էլ խառնուեց ահաբեկուած ամբոխին: Եղանակը մինչև երեկոյ պարզ էր, սակայն ճրագվառոցին սկսեց սեղմ գարնանային անձրևը և չանգը, գիւղը պատելով, մի տեսակ արհաւիրք տարածեց:

—Ճրագնի վառեցէք, ինչ լոլ ա՞ էս ձորումն ա լել: Հա՛, հա՛, շուա արէք,—գոռում էր գիւղի դատաւորը:

Այս տեղից—այն տեղից հաւաքուեցին, և մի խումբ ճրագաւորներ սկսեցին քաշանալ Ալէքի ձորի վրայ:

Նրանք մտան ձորի բերանից և, վախվախելով, անցան մի երրորդը, բայց ոչինչ չգտան: Անձրևը շղում էր և նըշաններից չէր էլ երևում թէ եա է ունելու: Մի կողմից անձրևը, մի կողմից խաւարը, որի մէջ ճրագները գայլի աչքերի փայլն էլ չունէին, միւս կողմից անակընկալ սարսափը, որ բոլորի վրայ դրի թանձրութիւնների ճնշողութիւն էր գործում,—ճրագաւորներին կանգնեցրեց:

—Էս քուլուսի մէջ կէլի աչքերով էս կէս գիշերին գտա չի գանուիլ. թուրքերը պահած կլի. ով ա գիտըմ, մէկերը պահըմ են, որ գշերովս մի վախը տանեն,—բախտին կընդեննք, մեզ էլ կկոտորեն. եկէք ետ դառնանք, տեհանք գլխներս ինչ ա գալի,—ձայն տուեց մինը:

—Լաւ ասըմ ա,—հաւանութիւն տուին չատերը: Ճրագաւորները չէին իմանում, որ գիւղից ընդամենը երեսուն քայլ հեռաւորութեան վրայ են: Այդ միջոցին Ղուկասը, որ ամենքի առաջին էր մտն գալի, միքանի քայլ առաջ մտնեց և յանկարծ ձայն տուեց:

—Գտայ: Հրէ հա՛... Սպանած ա խեղճը: Երկիւղից բոլորը խմբուեցին և սկսեցին նայել Ղուկասի ցոյց տուած կէտի վրայ: Որքան ուշադրութեամբ նայեցին ճրագաւորները, ոչինչ չկարողացան տեսնել, բաւ որում ճրագների աղօտ լոյսը հազիւ էր լոյս տարածում այն կէտի վրայ, որ Ղուկասն էր ցոյց տալիս:

—Արա, բա խի չենք մենք էլ տենըմ, Ղուկաս:

—Արա քոռ էք, տենըմ չէք: Հրէ ախպէրս տակին պառկած,— ասաց Ղուկասը բարձր ձայնով, ձեռը մեկնելով մի թփի վրայ:

—Տենըմ չենք, ուր ա—պատասխանեցին ճրագաւորները:

—Արա տենըմ չէք, հրէ դոշին էլ սև դաղ ա բերմ: Ղուկասն այդքան հեռաւորութիւնից այնպիսի մանրամասնութիւններ էր նկատում, որ միայն սպանողը կարող էր նկատել:

—Տենըմ չենք, Աստուծ գտենայ,—կըրկին ասացին ճրագաւորները:

—Առաջ եկէք: Բա էս ինչ ա,—բաւական առաջ գնալով ձեռը մեկնեց դէպի Գեոյի դիակը: Ճրագաւորները մի առ ժամանակ սառած մնացին, չէին իմանում, ինչ անեն:

—Արա, խի էք դուրբախ դառել, Գեոն հու ծեզ ուլուխան չի, առաջ եկէք էլի,—բղաւեց Ղուկասը: Ճրագաւորները վախվախելով առաջ գնացին և, Գեոյի դիակը աչքովն ընկնելիս, երեսները շըջեցին:

—Պոռվէ՜... քու տհէ անոջի տունը երկնէքին Աստուծը քանդի: Ի՞նչ անխնայ սպանած ա, արա,—ասացին ու յետ դարձան: Այս անգամ Ղուկասն ամենքի ետևից էր գնում: Այդ մի բացականչութիւնից աւել ճրագաւորներն այլ ևս ոչինչ չասացին, մինչև ձորից դուրս եկան: Ղուկասն էս լուռ էր: Երբոր ձորից դուրս եկան, Ղուկասը ջոկուեց և գնաց իրենց տունը:

—Թամամ էղ անխասի շան ազի կործն ա,—ասաց մինը Ղուկասի հեռանալուց յետ:

—Որ դրա գործը չի, մի վերսի վրայ տըլլին կճնանչի,—ձայն տուեց միւսը:

—Ցխլին ոչինչ. տեհաք ոչ՝ փորի վրի սև դատն էլ էր տենըմ, խալխի աչքին սևի եալն բերմ չի,—ձայն տուեց երրորդը:

—Տենաս էտ ուր էր եկել մեզ հետ:

—Իրա հաւատով եկել էր, մթամ իգակորուստ անի, մթամ՝ տես, տես, բանի խաբար չիմ:

—Այ, ինչ էք ասըմ, բեասբրի արինն էնա կորչըմ չի էլի. տենըմ չէք ինքն իրան ցուց ա տալի:

Այսպէս էին համոզւած ճրագաւորները:

(Շարունակելի)

Ա. Աղայեան:

չունենայ այս մասին դատ բանալու։ Ա-
նանք որ ամբաստանեալին պահուած
տեղը գիտեն, ոստիկանութեան իմաց
տալու, և ոստիկանական իշխանութիւնք
ալ ձերբակալելու պարտաւոր են։

—Տէրքոսի ջրի Ընկերութեան Ղալա-
թիոյ պաշտօնատեղիէն օսմ. զինուոր-
ներուն ու ժողովրդին վրայ հրազէն
պարպած ըլլալու ամբաստանութեամբ
ձերբակալուած Ստեփանի, Միհրանի
և միւս Ստեփանի ընկերներէն, Մուսլուգ-
ճը Խաչիկ, միջահասակ, աժգոյն, չափա-
ւոր բերնով, ծաւի աչքով և ածիլուած
դէմքով, -Լեոն, երկայնահասակ, պալ-
կահար, դեղին մազով, դեղին աչքով և
օնքով,—Հայկ, կարճահասակ, թխադէմ,
սև աչքով և յօնքով, սև զաուլ մազերով
և ածիլուած դէմքով,— Յովհաննէս, մի-
ջահասակ, լայն ճակատ, թխագոյն, ծա
յի աչքով և խարտեաշ մազով,—Ալեքսան,
բարձրահասակ, թխադէմ, գալկահար,
սև աչուի և թխահեր,— Մանուկ, բար-
ձրահասակ, տափակ ճակատով, թխա-
դէմ, սև աչուի,— Հրանտ, միջահասակ
ցորենագոյն, կապոյտ աչքով, դեղին
մազով,—Սերովբէ, կարճահասակ, բաց
ճակատով, թխադէմ, ածիլուած,— Հայկ
միջահասակ, թխադէմ, ծաւի աչքով, սև
յօնքերով, սև մազերով, պատանի,—ա-
սոնք ցարդ ձերբակալուած չըլլալով,
պատժական դատավարութեան օրինաց
371 րդ յօդուածին համաձայն 10 օր
պայմանաժամ տրուած է, որպէս զի
դատարան ներկայանան. հակառակ պա.
րագայի մէջ, օրինաց պէմ անսաստող
նկատուելով, ի բացակայութեան պիտի
դատուին, քաղաքային իրաւունքներէ է
պիտի զրկուին և իրենց ստացուածքը
արգելքի տակ պիտի դրուի։ Ասոնց պա-
հուած տեղը գիտցողներն իմաց տալու
և ոստիկանական իշխանութիւնք ալ
ձերբակալելու պարտաւոր են։

—Օգոստոս 14 և 17-ին, Ղալաթիա
Թիբինկի վաճառատունէն օսմ. զի-
նուորներուն վրայ հրազէն և ռումբ
արձակած ըլլալու ամբաստանութեամբ
ձերբակալուած Կարապետի և Մկրտիչի
և այլոց ընկերներէն փախստական Գէոր-
գեան Կարապետ, միջահասակ, տափակ
ճակատով, թխադէմ, չափաւոր բերնով և
քիթով, սև պեխով, ածիլուած, և որ
Ղալաթիոյ մաքսատան բեռնակիրներով
Թիբինկի վաճառատան մէջ կրցիշեւեր,
դեռ ձերբակալուած չըլլալով, պատժա-
կան դատավարութեան օրինաց 371-
րդ յօդուածին համաձայն, նախագահու-
թեան կողմէ 10 օր պայմանաժամ կը
տրուի իրեն, որպէսզի դատարան ներ-
կայանայ. հակառակ պարագայի մէջ,
օրինաց անսաստող համարուելով, ի
բացակայութեան պիտի դատուի, քաղա
քային իրաւունքներէ պիտի զրկուի և իր
ստացուածքն ալ արգելքի տակ պիտի
դրուի։ Իր պահուած տեղը գիտցողներն
իմաց տալու պարտաւոր են ոստիկա-
նութեան։

*Դեկտ. 6-ին, ուրբաթ օրուայ
«Նոր-Դար»-ի համարը չկարողա-
ցանք լոյս հանել, որա փոխարէն
լոյս է տեսնում այս համարը։*

ՔՐՈՆԻԿՈՆ

Մաղթանք Վանքի աւագ եկեղեցում.—
Ուրբաթ, դեկտեմբերի 6-ին, Վանքի ա-
ւագ եկեղեցում Թիֆլիսի հայ հոգևորա-
կանութեան ներկայութեամբ մաղթանք
կատարուեց Նորին Կայսերական Մեծու-
թեան անուանակոչութեան առթիւ։
Քաղաքը զարդարուած էր դրօշակներով,
իսկ երեկոյեան չքեղ հրավառութիւն
կար։

—

Էժանագին գրադարանի նոր ճիւղ. Հա-
յաբարում կիրակի օրուանից բացւում է
էժանագին գրադարանի մի նոր ճիւղ։
Համակրելի և օգտակար գործ է մտա-
ծուած Հայաբարի համար։

—

Դատապարտելի անհոգութիւն. «Նոր-Դար» ը
բազմիցս «Կենդանիներին պաշտպանող
ընկերութեան» ուշադրութիւնն է հրա-
ւիրել հակելու՝ որ անտեղի չարչարն
անլեզու խեղճ կենդանիներին, բայց
այդ նկատողութիւններն ամենևին չեն
խանգարել այդ ընկերութեան քունը ու
մինչև այսօր էլ մի շօշափելի կարգադրու-
թիւն չեղաւ, որ ասենք թէ հա, փառք
Աստուծոյ, հագիւ յիշեցին իրենց պար-
տականութիւնը։ Ամեն օր դժբաղդու-
թիւն ենք ունենում ականատես լինելու
կենդանիների չարչարանքներին և վըր-
դովւում ենք՝ այդ ընկերութեան բացար-
ձակ անտարբերութիւնը տեսնելով։
Թողնենք կառապաններին ու սայլապան-
ներին, որ ջարդեն ու տանջեն իրենց
ապրուստը հոգացող կենդանիներին։ Ի՞նչ
անուն տանք Թիֆլիսի ձիաքարշի ընկե-
րութեան կառավարիչներին, որ 24 հոգու
համար որոշուած վագոններում տեղա-
ւորում են 30—40 մարդ, շատ անգամ
ահագին կողովներով միս, հաւ, գետնա-
խնձոր, նաւթ, գաւ՝ ի նկատի չառնե-
լով, որ խեղճ ձիաները անզօր են այդ-
քան բեռ կրելու։ Ձիաքարշի կանտրա-
լեօրները հենց միայն նայում են, որ
մինը ձրի նստած չլինի, իսկ թէ 24
մարդու փոխանակ 40-ն են նստել, նրանց
փոյթ չէ։ Հարթ տեղերում ձիաները մի
կերպ քաշ են տալիս լիքը վագոնները,
իսկ զառիվերներում մարակի հարուած-
ների տակ շշկլուած, արիւն քրտինք
կտրած՝ տանջանքով շարժւում են։ Այս
բոլորը տեսնելուց յետոյ, կարո՞ղ ենք
հաւատալ, որ Թիֆլիսում կենդանիներին
պաշտպանող ընկերութիւն գոյութիւն
ունի։

—

Անցեալ անգամ հաղորդեցինք, որ Սան-
Ռեմոյում վախճանուել է ուժանակը հը-
նարող շուեդացի Ալֆրեդ Նոբելը։ Այժմ
իմանում ենք, որ հանգուցեալը իւր մա-
հից յետոյ թողել է 180 միլիոն փրանկ
կարողութիւն։

—

Նոր հրատարակութիւն մետաքսի արդիւ-
նաբերութեան վերաբերեալ։ Պրոֆեսոր Տի-
խոմիրովը կազմել է 46 երեսից բաղկա-
ցած նկարների մի ժողովածու մետաք-
սի արդիւնաբերութեան վերաբերեալ
բացատրութիւններով հանդերձ։ Այդ
նկարները և բացատրութիւնները նուի-
րուած են գլխաւորապէս մետաքսի որ-
դի զարգացման պատմութեանը և նրա
տեսակ տեսակ հիւանդութիւններին,
զանազան բոյսերի, որոնք իբրև կերա-
կուր են ծառայում մետաքսի որդի հա-
մար և այլն։ «Նով. Օբ.» հաղորդում է
որ այդ հրատարակութիւնից երկրագոր-
ծութեան մինիստրութեան գիտական
մասը 94 օրինակ ուղարկել է Կովկա-
սի իւր ներկայացուցչին բաժանելու թէ
մետաքսարդիւնաբերական կայարանում
ծառայողներին և թէ զանազան մե-
տաքս արդիւնաբերողներին. իսկ 10 օ-
րինակ յատկացուած է մետաքսարդիւ-
նաբերական կայարանի գրադարանին։

—

Նաւթի նոր փիրմայ Բաքւում. «Կասպի»
լրագիրը հաղորդում է, որ եղբայր Փի-
թոյեանները Բաքւում նաւթարդիւնա-
բերական մի նոր ընդարձակ փիրմայ
են հաստատելու, ուստի և ուզում են
կապալով 10 դեսեատին հող վերցնել
եղբ. Միրզոյեաններից։

ՄԵԶ ԳՐՈՒՄ ԵՆ

ԹԱՒՐԻԶԻՑ.—«Թաւրիզից 24 վերստ
հեռաւորութեամբ դէպի Կովկաս տանող
ճանապարհի վրայ պոստը ապահով տեղ
հասցնելու համար, պահապաններ են
նշանակուած, որոնք ճանապարհորդնե-
րից փող կորզելու համար զանազան
միջոցների են դիմում, որը մի տեսակ
աւազակութեան է նմանում։ Անցեալ օ-
րերը դրանք բռնում են մի քանի «չա-
րւադարների» (ձիաւոր բեռնակիրներ),
խլում են նրանց հրացանները և իրենց
էլ բանտարկում, պատճառաբանելով թէ
կառավարութիւնից այդպիսի կարգա-
դրութիւն են ստացել։ Ուրիշ ճանապար-
հորդներ են վրայ են հասնում և տեղեկա-
նալով եղելութեան մասին, յայտնում են
պահապաններին, որ իրենք հեռագիր
կըխփեն նահանգապետին այդ կարգա-
դրութեան մասին ստոյգը տեղեկանալու։
Պահապանները իմանալով այդ, իսկոյն
ներողութիւն են խնդրում, արձակում
բռնուածներին և պարզ խոստովանում,
որ այդ բանը արել են մի քանի կոպէկ
«չայի փող» ստանալու։

—Լուր է պտտում, որ Մուզաֆար
Էդդին շահը մտադիր է այս ձմեռ գալ
Թաւրիզ մի կարճ ժամանակ այստեղ մը-
նալու։

—

ՄԱԿՐԱՍԱՑԻՑ (Զամախու գաւառ).—
Զամախու ամբողջ գաւառում մեր գիւղի
եկեղեցական ծխական դպրոցն է բաց։
Սակայն այդ միակ դպրոցի մէջ էլ կա-
մայականութիւն է տիրում։ Օրինակ·
գիւղը Աւագեանցը միքանի տարիներ
ազգային ուսումնարաններում յաճախ.
պէս կրօնաուսուցչութիւն անելուց յետոյ՝
1890 թուին քահանայ է ձեռնադրւում
և մեր գիւղի վրայ ծխատէր նշանակւում։
Այն թուից մինչև ներկայ ուսումնա-
րին նա էր վարում մեր դպրոցի կրօն-
ուսուցչի պաշտօնը։ Բայց այս տարի ա.
ւագ-ուսուցչի կամեցողութեան շնորհիւ
նա այլ ևս կրօնուսույց չէ։ Նրա տեղ
հրաւիրուած է մի աշխարհական ոմն...
Ցաւալի է ի հարկէ։

—Մեր այդ դպրոցում խառն ուսա-
նում են և օրիորդները։ Վարժուհու պաշ-
տօնը վարում էր պ. աւագ-ուսուցչի կինը։
Այս ամառ կարգադրուեց, որ աւագ-ու-
սուցիչը արժանաւոր վարժուհի հրաւիրի։
Նա էլ սեպտեմբերի վերջին միայն յայտ-
նեց, թէ համաձայնուող չկայ։ Ճարա-
հատեալ էլի նշանակուեց նախկին վար-
ժուհին...

ՄԱՄՈՒԼԻ ՇՈՒՐՋԸ

«Ռուսսկ. Վեդ.» լրագիրը Պետերբուր-
գից մի ընդարձակ հաղորդագրութիւն
է ստացել Կովկասում աւազակութիւնը
վերացնելու համար ձեռք առնելիք մի-
ջոցների մասին։ Այդ առթիւ յիշեալ
լրագիրը վիճակագրական տեղեկութիւն-
ներ է հաղորդում Կովկասում և Անդըր-
կովկասում տեղի ունեցած աւազակու-
թիւնների վերաբերմամբ։ Հիւսիսային
Կովկասի նկատմամբ «Ռուսկ. Վեդ.»-ին
ասում է, թէ Կովկասի այդ մասում բը-
պանութիւնների և աւազակութեան միւս
գործերի թիւը չի կարելի նշանաւոր
համարել, մինչդեռ Անդրկովկասում

Եթէ սպանութիւնների, աւարառութիւնների, կողոպուտների և գիների յարձակումների գործերը գումարենք, կերևայ, որ սոյն տարուայ յունուարից մինչև հոկտեմբեր ամիսը այդպիսի գործերից մէկն ընկնում է այստեղ 1,260 բնակչի վրայ, իսկ Դոնձակի նահանգում մինչև անգամ 760 հոգու վրայ։ Սպանութիւնների յաճախակի դէպքերը (1,801 գործ 9 ամսում) ամփոփբար բացատրւում է հարաւի բնակիչների տաք բնաւորութեամբ, նրանց զարգացման պակասութեամբ, զանազան ձեռքով արտայայտուող վրիժառութեան սովորութեամբ, և բնակիչների տարբեր ցեղերից բաղկացած մասերի իրար ատած թշնամութեամբ։ Սակայն, բացի դրանից, տեղացիների զէնք կրելն էլ բաւական դիւրացնում է ոճիրներ կատարելը, այնպէս որ զինեալ մէջ պատահող ամեն մի կռիւ վերջանում է արիւնհեղութեամբ կամ սպանութեամբ, կամ թէ իրար վիրաւորելով, իսկ կատաղած ժամանակ կատարուած սպանութիւնների թիւը կազմում է ընդհանուր թուի 60 %։ Ուսափ աւարառութիւնները և աւազակութեանց մասնաւոր դէպքերը, որ կատարում են մինչև անգամ մի քանի անձեր միասին, բայց առանց աւազակախումբ կազմելու, ամփոփկան երևոյթ են հանդիսանում Անդրկովկասի գլխավորին զինուած բնակիչների մէջ։

Սրա հետ միասին, ոստիկանական
կազմութիւնը բոլորովին անբաւար է։
Անցեալ տարի իրենց պաշտօնի մէջ կա-
տարած յանցանքների համար քննու-
թեան տակ են ընկել, օրինակ, 3 գա-
ւառապետ, 7 պրիստաւ, 8 գիւղական
տանուտէր և գիւղական տանուտէրի 1
օգնական։ Այս բոլորն ի նկատի առնե-
լով, ինչպէս հաղորդում են «Ռուսկ.
Վեդ.»-ին, մտադրութիւն կայ՝

1) Աւազակներին հետամուտ լինելու և բռնելու գործը յանձնել առանձնակի ընտրուած ոստիկանական պաշտօնեաների, որոնք ծանօթ պիտի լինեն տեղական պայմաններին և այդ գործի համար անհրաժեշտ յատկութիւնները պիտի ունենան։ 2) Նահանգապետների հետ համաձայնութիւն կայացնելով, ընդհանուր հրահանգ մշակել այդ պաշտօնեաների համար։ 3) Կազակների հարիւրեակներ (սոտնեա) ուղարկել աւազակներին հետամուտ լինելու գործում ոստիկանութեանն աջակցելու համար։ 4) Ոստիկանական տեղական պաշտօնեաներին հասկացնել, որ անհրաժեշտ է ձեռք բերել գիւղական բընակիչների մէջ եղած ազդեցիկ անձերի վստահութիւնը։ 5) Խրախուսել այս վերջիններին, այլ և միւս բնակիչներին, զանազան պարգևներ տալով նրանց, աւազակներ տեղը յայտնած և նրանց բռնած ժամանակ։ 6, Երկրի մէջ կատարուող բոլոր աւազակութիւնների և այդ բանում ոստիկանութեան կատարած գործողութիւնների մասին տեղեկութիւններ կեդրոնացնել կառավարչապետի գլխաւոր, և 7 երկրի կառավարչապետի վարչութեան մէջ մերձակայ վերահսկողութիւն սահմանել ոստիկանական պաշտօնեաների գործունէութեան վերաբերմամբ։ Սրա հետ միասին ուշադրութիւն է դարձուած այն բանի վրայ թէ անհրաժեշտ է զէթ մի մասնակի ռեֆորմ մացնել Կովկասի դատական մասի մէջ։

Թէ ինչ պիտի լինի այդ ռեֆորմը,
Մոսկուայի լրագիրը չի հաղորդում։ Իսկ
«Նով. Վր.»-ն իւր կողմից նկատում է,
թէ վերոյիշեալ բոլոր միջոցները թղթի
վրայ գրուած մեռած տառ կմնան, «ե-
թէ կեանքի մէջ չմացուին ուժեղ ձեռով
Թիֆլիսից»։

*** Այս օրերս անգլիական «Times»
լրագիրը հրատարակել է այդ լրագրի
մի համարի ճիշտ ընդօրինակումը, որ
լոյս է տեսել հարիւր տարի առաջ—
1796 թ. նոյեմբերի 9-ին։ Այդ օրը,
ինչպէս և այժմ, Լոնդոնի Սիտիի լորդ-
մէրի պաշտօնի էր մտել նոր մարդ։
Լրագրի այդ համարից իմանում է, որ
Գիլդհոլի սովորական բանկետին ներ-
կայ լինելու համար այն ժամանակ հրա-
ւիրւում էին ոչ թէ միայն մինիստրու-
թեան ներկայացուցիչները, այլ և—ընդ-
դիմադիր կուսակցութեան անդամները։

Հարիւր տարի առաջուայ համարի
մէջ, որ մի ուրիշ հետաքրքրական բան
կայ, դա նախագահ Վաշինգտոնի գրու-
թիւնն է իւր հրաժարականի մասին։

Դժբաղդաբար մենք պէտք է յայտարարենք, որ Ջէնրալ Վաշինգտոնը հրաժարական է տուել և այլն,

գրում էր այն ժամանակ «Times»-ը։ Այդ
լրագիրն այն ժամանակ փոքր գիրք
ունենալով (4 երես, այժմ 16 երես)
նախագահի գրութիւնը նրա մէջ ամ-
բողջապէս չէր հրատարակուած և խմբա-
գրութիւնը բաւականացել էր նկատելով
որ այդ գրութիւնը «խիստ ճարպիկ մի
յօրինուած է»։ Միևնոյն համարը պարզ
ցոյց է տալիս, թէ ինչ ահագին փոփո-
խութիւններ են կատարուել այս դա-
րում Անգլիայի ժողովրդի կեանքի մէջ։
Օրինակ, մի գաղափար կազմելու հա-
մար, թէ ո՛ր աստիճան զարգացել է այդ
երկրի արդիւնաբերութիւնը, բաւական
է համեմատել Բորսայի այժմեան և
այն ժամանակուայ արժեթղթերի ցու-
ցակը։ Հին համարի մէջ այդ ցուցակը
պարունակում է 12 արժեթուղթ և գի
տեղուած է վեց տողի մէջ, իսկ 1896
թ. նոյեմբերի 9-ի համարում միևնոյն
բաժինը բռնում է աւելի քան երկու
սիւնեակ ամենամանր տառերով տը-
պուած։

Ցետոյ, հին համարի մէջ յիշւում է
միայն երկու թատրոն, որոնցից մէկի
մէջ ներկայացնում են եղել Շեքսպիրի
«Ռիչարդ III»-ը։

Մի քանի յայտարարութիւնները հե-
տաքրքրական մանրամասնութիւններ են
հաղորդում այնժամանակուայ ընտա-
նեկան և հասարակական կեանքի մա-
սին։ Այդպէս են, օրինակ, տների վա-
ճառման և վարձու տալու մասին յայ-
տարարութիւնները, որի մէջ մի մարդ
«10 փուտ երկարութիւն» ունեցող օձ է
ցոյց տալիս «ամեն մի ջենտլմէնի կամ
լէդիի իրենց տանը, ով կցանկանայ»։

Հին համարն արժէր 4½ պենս, այժմ
«Times»-ի համարն արժէ 3 պենս։ Պէտք
է ի նկատի ունենալ, որ այդ լրագիրն
էժան լրագրներից չէ («Daily News»-ի
մի համարը՝ 10 երես, արժէ, օրինակ 1
պեննի)։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԱՄԱԿ ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻՑ

(«Նոր-Դար»-ի թղթակցից)

ՌՈՒՍՉՈՒԿ, 24 նոյեմ. Նոյեմբեր 17-ին,
կիրակի օր Ռուսչուկի քաղաքային վար-
չութեան բաժնում տեղի պիտի ունե-
նար Ազգային ժողովոյ պատգամաւորա-
կան ընտրութիւններ։ Օր մ առաջ ար-
դէն քաղաքին բոլոր արուարձաններէն
ընտրուած գիւղացի պատգամաւորներ
իրենց կուսակցութեան դրօշն պարզած
սկսած էին երկձի կառքերի շարքերով
որընթաց քաղաք մտնել։ Կիրակի առա-
ւօտ ժամ հազիւ 8-ին մօտեցած էր, ազ-
գային կուսակցութեանց նուագախմբե-
րը սկսան քաղաքին այլ և այլ կողմե-
րը ման գալ, ու իրենց քաղցրանուագ
քայլերգներով ժողովրդեան հրաւէր
կարդալ։ Երբ որ լսեցի նուագախմբի
ձայները, իսկոյն շտապ քայլերով դիմե-
ցի դէպի ընտրութեան կեդրոնավայրը,
ուր տակաւին հոծ բազմութիւն մի ար-
ված չէր։ Քիչ յետոյ ամեն կողմէ
խումբ խումբ քաղաքացիներ կուգային
քաղաքին նշանաւոր հրապարակն, իսկ
մօտակայ գիւղացի պատգամաւորներն
տակաւ առ տակաւ հետևեան գնդշկա-
կան նուագի մը առաջնորդութեամբ կը-
հասնէին. մարդիկ վեր վար կերթային,
շատեր ալ իրենց կուսակցութեան վա-
ղօրօք պատրաստած քուէի թղթերն
կըցրուէին։

Հրապարակին վրայ կըծածանէին ազ-
գային կուսակցութեան երփներանգ դը-
րօշները. բայց նրանց մէջ կային
թուով երկու կարմիր դրօշակներ որ
բոլորին ուշադրութիւնը գրգռուէին.
նրանք կըկրէին իրենց վրայ «Дому
Консерваторите» գրութիւններ և կը-
պատկանէին Ստամբուլով կուսակցու-
թեան։ Մի խումբ վարձկան արբիկ-
ներ համախմբուած այդ դրօշակների
տակ պիտի մը թելադրութեամբ անդա-
դար հրապարակու կծու խօսքեր կուղ-
ղէին արդի մինիստրութեան և կըկար-
ծէին թէ իրենց խօսքերով ժողովրդին
հաճելի պիտի թուին։ Մինչդ՛ու կառա-
վարութիւնը առանց որևէ ցոյցի լռիկ
մնջիկ իրեն գործն կըշարունակէր։ Ստ-
տամբուլովեանք օրեր առաջ ազիտա-
ցիայ ընելով ամբողջ Բուլղարիայում
խոստացած են, եթէ իրենց կողմն շա-
հի, մաքսային, տուրքերն թեթևցնել
անուղղակի տուրքերն պակսեցնել ու ժո-
ղովրդի վիճակն բարելաւել։

Սակայն շատ զարմանալի է իրենց
այդ խոստումները. միթէ նրանց ձեռ-
քում չէր գտնուէր սրանից երկու տա-
րիներ առաջ կառավարութեան ղեկն,
ինչո՞ւ այն ատեն ժողովրդին վիճակն
վատթարացուցին, այսօր բուլղար ժո-
ղովուրդն տակաւին նոր ազատուած
Ստամբուլովի կառավարութենէն կըխոս-
տանան կատարեալ ազատութիւն տալ
երկրին։ Նրանց խոստումները պարզա-
պէս հաւատ չի գտնէր ժողովրդի մէջ,
որովհետև ժողովուրդն անցեալի դէպ-
քերից փորձուած, կրկին նրանց ձեռք
ընկնիլ չուզէ։

Ստամբուլովի կուսակիցներն իրենց
բոլոր ջանքով կաշխատէին Ստամբուլովի
ժառանգած ծրագիրն գործադրութեան
դնել վերստին իբրև երկրին օգտակար։
Սակայն փորձեալն կրկին փորձել յի-
մարութիւն է։

ձշմարիտ խօսելով արդի մինիատուրիւնը երկրին անհետական քայքայուած վիճակն բարձրացնելու բաւական ջանք տարաւ, և մասամբ գրեթէ իր նպատակին հասաւ. եթէ ասկի երկար ժամանակ պաշտօնի վրայ մնայ, երկրին չատ օգտակար պիտի կարողանայ ըլլալ. Բայց բատօ—սլաւովիտաներ, կանկովիտաներ, կարաւելովիտաներ, ատամբուլովիտաներ տարբեր գործարաններով իմի ձուլուած, նրանց գործունէութիւնը երկրին վնասակար համարելով, անդադար ապիտացիայ բնելէ չեն դադարիր եթէ ժողովրդեան և եթէ ազգային ժողովոց պատգամաւորներու մէջ։

Նրանց յոյն պիտի պակասէր եթէ կառավարութիւնը աչալուրջ չի հսկէր բոլոր անցուդարձերին։ Նրանք յաջողած էին բաւական պատգամաւորներ իրենց կողմն չահել, այնպէս որ ազգային ժողովոյ մէջ պատգամաւորների մեծագոյն մասն հակակառավարական դիրք մը բռնելով այժմեան մինիսթերութիւնը պիտի տապալէին։ Բայց կառավարութիւնը կանխու տեղեկացած լինելով նրանց դիտաւորութեան, առաջարկեց իշխանին ազգային ժողովի նախկին պատգամաւորներին չնչուած հրատարակել, ու նորից նոր ընտրութիւններ կատարել. իշխանն ընդունած է մինիսթերութեան առաջարկն, որոնց վրայ կառավարութիւնը ամբողջ Բուլղարիայում իւրաքանչիւր քաղաքի համար նոր պատգամաւոր—ընտրելիներ յայտարարեց պաշտօնապէս։

Ռուսչուզի ընտրելիները ներկայացուած էին արդարադատութեան մինիսթր Թէոդոր Թէոդորով, մինիսթր Նայմէն, Պէնէվ և քաղաքացի Իլիայ Տրիֆոնով։ Ճիտ հաւանական է որ կառավարութիւնը տանի յաղթանակն, ինչպէս տարաւ Ռուսչուզի մէջ։

Ն. Թորոսեան.

ՍՄԻՐՆԱ, 24 նոյեմբ — Սաֆիա գիւղը գտնւում է Սեպտեմբերից 23 վերստ հեռու գնկի հարաւ։ Այս գուտ հայաբնակ գիւղը բակլացած է մօտ 200 տանից. ունի մի քարաշէն բաւական ընդարձակ եկեղեցի և մի ազբունական միջնակարգ ուսումնարան, ուր յաճախում են 80-ի չափ երկտեռ մանուկներ։ Դաւառիս Կարզախ գիւղից յիսուս Սաֆիան Սեպտեմբերի 7-ին հրամայեց գիւղի մէջ հիմք դրուել գինեանների, և մինչ որոշ և Սաֆիա գիւղում,

Անցեալներում մենք առիթ ունեցանք խօսելու Նոր-Դար-ի մէջ գիւղի գինեանների և նրանց կողմտաբեր հետևանքի մասին, թէ որ տատիճան նիւթական և բարոյական վնասներ է պատճառում երկրագործ դասակարգին։ Այս գիւղումն էլ մօտ 20 տարի գոյութիւն ունէր գինեատունը և այդքան ժամանակում իր կատարեալ հունձն արաւ նաև Սակայն սաֆիացիք, վերջապէս, մասամբ դառն փորձից խրատուած, մասամբ տեղական ուսուցչի, մանաւանդ տեղւոյն գաւառապետի յորդորանօք ապատուեցին այդ պատուհասից։ Գինեվաճառները մէկը միւսի ձեռքից էին խլում այս գիւղում գինեատուն բանալու իրաւունքը։ Տարեկան 100 լուր. յօդուտ գիւղի վճարը բարձրացրին մինչև 500 ր., բայց երբ հակացան, որ այն 500 րուբլին, որը ստանալու է տարեկան գիւղական համայնքը գինեվաճառից, հինգ անգամ բազմապատկուած նորից լցուելու է նոյն մարդու գրպանը և մէկ այդ բոլոր փողը գալս է գալու նոյն իսկ գիւղացիների գրպանից, միաբերան մերժեցին իրաւունք տալ գիւղում գինեատուն բանալու։ Նոյն իսկ գինեատուն չինուելուն տէր գիւղացին այնքան բարի գտնուեց, որ մերժեց իր կրպակը վարձով տալուց Այսպիսով ազատուեցաւ գիւղը մարդկային չար պատուհասներից մէկից... Գիւղացին չատ է խոփում, ատկայն չատով էլ կուզղի իր այդ սխալը, եթէ միայն լինին հանգստպողներ, զէպի լաբին առաջնորդողներ։

Որքան ցանկալի է, որ Սաֆիայի օրինակին հետևին և այն գիւղերը, որոնց գոյութիւն ունի այդ ժանտախտը։ Ամեն մի հանգստող անհատի սրբազան պարտականութիւնն է՝ հետևել և օգնել մեր մոռացուած, չաքաշ, բայց իր զառն քրտինքով մեզ հաց մատակարարող գիւղացի եղբարներին։

Հակ-Հասուն.

Պաշտօնական խմբագիր՝
ՄԻՆԱՍ ՔԵՐԲԵՐԵԱՆ

Հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս տեսաւ
ՄՈՌԱՑՈՒԱԾ ՍՏԽԱՐՀԻ
ԵՐԳՈՒՂ ԴԻՐՔԸ

Վաճառւում է Կենդրոնական գրավաճառանոցում և ինձ մօտ.

Ա. կիրքն արժէ 60 կոպ.
Բ. . . . . 50 »
Գ. . . . . 40 »
} երեքը միասին 1 ր. 25 կ.

Պատի միջոցով պիտոդներն իրաքանչիւր գրքի ճանապարհածախս պէտք է ուղարկին մի հատ 7 կոպէկանոց մարկ. (արտասահմանից 14 կոպէկանոց)

Հասցէ՝ Николаевская ул. д. №10 Архидіакону Ар. Джугурьянцъ
10 - 5

КАКАО БЕЗЪ МАСЛА
ЗДОРОВЫЙ ПИТАТЕЛЬНЫЙ НАПИТОКЪ
МИНУТНОЕ ПРИГОТОВЛЕНІЕ
100 ЧАШЕКЪ ИЗЪ ФУНТА.
С.СІУИК°
(М.) 52—4

„ՀԻԳԻԵՆԱ“ ԸՆԿ.
ԾԱՂԿԻ ԷՖՍՏՐԱԿՏՆԵՐ.
ՀԱՄԱՁԱՅՆ ՀՈՏԻ. հաճելի են, հզիմացկուն, նշանաւոր կերպով էներգիա տալիս են մինչև այժմ գոյութիւն ունեցող ծաղկի օդեկոլոններին և արտասպրէ ջրերին։

Գլխաւոր պահեստները СПБ., Площ. Александр. театра, 9. МОСКВА, ВАРШАВА. № 11717.
(М.) 14—3

САНТАЛ МИДЪ
SANTAL MIDY
Պարիզի գեղագործի պատրաստած — թոյլատրուած է Ռուսիայում նոր կատարելների մէջ պարունակում են մաքուր սանտալի էսանսիա։
Պահեստն է Ռուսիայի գլխաւոր գեղատներում։
(М.) 33—31

АЛЬДЕХИДЪ ВЛАДІО КРЕМЪ
Главный складъ въ Москвѣ.
Г. В. Кремеръ, Чистовскій пер. д. №2
Малый флак. 60 к.
Больш. флак. 1 р.
МОЖНО ПОЛУЧАТЬ ВЕЗДѢ.
(М.) 32—5

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Դեկտեմբերի 8-ին, կիրակի երեկոյեան 9 ժամին ընդհանուր ժողով է նշանակուած վճռելու հետևեալ հարցերը 1) անտեսական մասի կառավարութիւնը. 2) վերահսկող յանձնաժողովի 2 անդամի ընտրութիւնը. 3) 160 րուբլի պակաս բոլի լրացրը, որը երկայ տարուայ աւազանների յանձնելիս. 4) կանգիսատանների բաէթարկութեան ժողովարանի անդամութեան համար և այլն։

(674) 1—1

Լոյս է տեսել
ՓԱՌԱԿԱՑԱԾ ԵՒ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ
ՕՐԱՑՈՅՑ 1897 Թ.
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
վեհ. Կաթուղիկոսի, ա.էջմիածնի, Գէորգեան ճեմարանի և այլ պատկերներով զարդարուած։
ԳԻՆՆ Է 20 ԿՈՊ.
Վաճառւում է Թիֆլիսում Կենդրոնական և «Արարատ» գրավաճառանոցներում, վիճակ, կանոնատարիներում և Հոգևոր կառավարութիւններում Մեծ բանակութեամբ վրայն 20% զիջում, եթէ դիմեն ս. էջմիածնի Տպարանական ժողովին այս հասցէով Св. Эчміадзинъ, Типографическ. Комитету.
(676) 10—9

ԱՐԱՔՍԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ
Բացուած է 1897 տարեշրջանի բաժանորդագրութիւնը։ Հանդէսի երկու գրքերը, որ պարունակելու են աւելի քան 150 ճոխ նկար, զբաղուելիք Թրքա-Հայաստանի բնութիւնից և տիպերից, ամենայն ճշտութեամբ կը հրատարակուին ապրիլ և նոյեմբեր ամիսներին։ Բաժանորդագինը մնում է նոյնը—երկու գրքի համար 3 րուբլի, արտասահման 10 ֆրանկ կամ 2 դոլար (տալէր)։ Մեր այս ձեռնարկութեան մասին աւելի մանրամասնօրէն գրուած է «Նոր-Դար»-ի 204 համարում։ 1895 տարեշրջանի երկրորդ գիրքը լոյս կը տեսնի փետրուարին։
Դիմելու է այս ապահով հասցէով С.-Петербургъ, Симеону Гуламиряницу կամ St. Pétersbourg Siméon Goulamiriantz.
Խմբագիր-հրատարակիչ «Արաքս»-ի ՍԻՄԷՕՆ ԴՈՒԼԱՄԻՐԵԱՆՑ
(685) 5—4

BATEAUX a VAPEUR FRANÇAIS N. PAQUET ET Ci
ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
„Ն. ՊԱՔԷ ԵՒ ԸՆԿ“.
Կանոնաւոր և ուղիղ երթեւեկութիւն ՄԱՐՍԷՅԼԻՑ ԲԱԹՈՒՄ և ԲԱԹՈՒՄԻՑ ՄԱՐՍԷՅԼ. երկու շաբաթը մի անգամ։
Բաթումից Մարսէյլ գնալիս մանում է Տրապիզոն, Սամսոն և Պաֆս բազաքները
Բաթումից դարս է գալիս չորեքշաբթի, 11. դեկտեմբերի (23 դեկտեմբերի) «Մինգրելիա» չոգենաւը, Նաւապետ՝ Ջերու։
Բաթումից Պաֆիզ հաղորդակցութեան առժամեակները սովորական դիշումն ունին։ Ընդունք յանձնելու կամ ճանապարհորդութեան վերաբերեալ տեղեկութիւններ տանելու համար դիմել՝
Բաթումում—պ. ՎԻԿՏՈՐ ԴԱՐՆՈՅԻՆ, Նաւահրժնոյատ
Թիֆլիսում—պ. ԲԱՐԵՆՂԵՆԴԱՆԵԱՆԻՆ, Սիոնի փողոց, քարվանս. Դէորգ ագայի
Բագումում—պ. Սամսէլ Դելլաբեանին, Կոլեգեական Քաղաքային հրատարակ։
Նովոռոսիյսկում—պ. ՄԵԼԽԻՕՐ ԳԵՐՉԵՆՐՈՒԴԵՐԻՆ։
(665 20—7

ОТЪ ГЛАВНОЙ КОНТОРЫ ВИНО-ТОРГОВЛИ
ПОСТАВЩИКЪ
Двора Его ИМПЕРАТОРСКАГО Величества
ТОВАРИЩЕСТВА
ПЕТРА АРСЕНЬЕВИЧА СМИРНОВА,
У ЧУГУННАГО МОСТА, ВЪ МОСКВѢ.
за высокое достоинство столоваго очищеннаго вина, нѣжинской рябины, водокъ, наливокъ и ликеръ фирма удостоена на Всероссійской Промышленной и Художественной выставкѣ въ Нижнемъ Новгородѣ 1896 г., четвертаго
ГОСУДАРСТВЕННАГО ГЕРБА.
Можно получать во всѣхъ вино-торговляхъ, ресторанахъ и гостинницахъ:
СТОЛОВОЕ ВИНО подъ № 40, № 32, № 20, № 31, и № 21. ПШЕНИЧНОЕ ВИНО № 20, НѢЖИНСКУЮ РЯБИНУ № 30, № 23, ЯГОДНЫЯ НАСОЙКИ, НАЛИВКИ ЛИКЕРЪ, ГОРЬКІЯ ТРАВНЫЯ и ФРУКТОВЫЯ ВОДКИ, КАВКАЗСКІЙ, ВИНОГРАДНЫЙ КОНЬЯКЪ, РУССКІЯ и ИНОСТРАННЫЯ ВИНОГРАДНЫЯ ВИНА.
Прейсъ-Куранты высылаются немедленно
ОТДѢЛЕНІЯ НАХОДЯТСЯ: въ С.-Петербургѣ, на углу Мал. Морск. и Горохов. д. № 13—8. и въ Нижнемъ-Новгородѣ, на Нижнемъ Базарѣ, противъ Волжско-Камскаго Банка.
(М.) 10—9

Тифлисъ Дов. цензурою 6-го Декабря 1896 г. Տպարան Ա. Մելիք-Շահնազարեանցի։ Типогр. А. О. Меликъ-Шахназаріанца, Головинскій просп. домъ Рейтера